

Թող այս քիչ մ'աւելի մանրամասնութիւնը մեր Աշխատասար Եղբարց գործու- նէութենէն՝ ըլլայ զարդը Միս. Դաստիարակներու ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԻՆ մէջ՝ անոնց նուիրուած անձուկ շրջանակին:

**ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԿՏԱԿԻՆ**

Մխիթարեան մշակներու ուրիշ կարեւոր խումբ մը ահա, որոնց մասին առանձին յիշատակութիւն չիկայ մեր հետագայ Տեսչական Կազմերուն մէջ: Բայց պարտք կը համարինք զէթ հոս համառօտ ակնարկ մը տալու անոնց՝ որոնք ոչ միայն հոգացին մեր Մտաւորական մեծ կեդրոններուն նիւթականը, այլ և անկից բաժին հանեցին Պոլսոյ, Տրապիզոնի և Մշոյ օժանդակ վարժարաններուն ալ:

Ուրեմն եթէ Մ. Ռափայէլեան Յարկերուն մէջ Մխիթարայ որդիներէն մաս մը ուսուցչութեամբ և իր զրչով հրահանգեց ազգային մանկտին՝ իրբեւ հետեւողներ նախկին Ուսուցիչ — Դաստիարակ հայրերուն, ուրիշ խումբ մ'ալ իր անձը զոհեց Մուրատեան եկամուտներու բարգաւաճման՝ իրբեւ շարունակողներ մեր Տեսեսագէտ նախնեաց, առանց որոնց՝ կենդանութենէ պիտի դադրէին անոնք. ուստի անոնց հան- դէպ նուազ պէտք չէ ըլլայ համազգային երախտագիտութիւնը՝ քան ինչ որ մտաւո- ըրական դաստիարակներուն:

Հարկ է գիտնալ նախ, որ ապագայ կառուցանելի դպրոցին համար Միւրանու- թենէս կը կարգուին Հ. Յար. Աւգերեան, Հ. Յակոբոս ճէլալեան և Հ. Արսէն Անթիմոսեան «առժամանակեայ գործակալը դրամոց Մուրատեան դպրատան» (Ժող. Արձ. 1828, նիստ Յունվ. 8-ի). իսկ յետոյ Ժողովը կ'որոշէ նոյները Փատուա զրկել «առ ի ընտրել զգնելի գետին ի Demanio—յէ (Անդ. նիստ Օգ. 13-ի): Դարձեալ սոյն յանձնախումբը Օգ. 20-ին Փատուա կը մեկնի քննութիւններ կատարելու. (տես յետոյ Ծանօթ. 1, Հ. Իգն. Փափագ. ի Տեսչական շրջանին մէջ): Ուրեմն ինչ որ կ'երեւի Դիւանական թուղթերէ՝ նախ տրամադրելի արքունի կալուածներէն գնելու մտադրու- թիւնն ունեցած են. (Անդ. 1830, նիստ Օգ. 10-ի), ուսկից կը հրաժարին յետոյ, որով և կ'որոշուի գնել «զմասնաւորաց» (Անդ. 1831, նիստ Հոկտ. 6-ի), այսինքն «ան- յապաղ սկսանիլ գնել զկալուածս ի մասփաւորաց վասն Մուրատեան դպրատան». (Անդ. 1832, նիստ. Յունվ. 18-ի): Ասկէ վերջն է որ դադրելով առժամանակեայ յանձնախումբին պաշտօնը՝ Մարտ 5-ին կ'որոշուի «կարգել Գործակալս զՀ. Յա- ըութիւն Աւգերեան, զՀ. Յակոբոս ճէլալեան և զՀ. Սամուէլ Սամսարեան ի վերայ գնելի կալուածոց Մուրատեան դպրատան». (Անդ.):

Կը տեսնենք որ ասոնց ծրագրական գործառնութիւններ կը մնան, վասն զի ամէնէն վերջ վարձու կ'առնուի Իիզանի Մօրէթա տիկնոջ պալատը Մուրատեան դպրոցի համար, ինչպէս պիտի տեսնենք վերջը:

Մուրատեան կտակի Մատակարարին հաստատուն բնակավայրն էր՝ սկիզբէն ի վեր՝ Փատուայի Մուրատեան Դպրոցը, որուն ներքին Գործակալն էր միանգամայն. այդպէս կը շարունակուի՝ նոյն իսկ Մուրատեան վարժարանի Փարիզ փոխադրու- թենէն վերջ՝ մնալով այլեւս ի Փատուա լոկ կտակի Մատակարար՝ մինչև 1903, յորում երեւելի Հ. Մանուէլ Քաջունիէ վերջ Փատուայի և Գաղրոնի Մուրատեան կա- լուածները առանձին երկու Հայրերէ կը մատակարարուին՝ զատ պաշտօնարաններով:

Հոս կու տանք ժամանակագրական կարգով անուններ, որոնք ընտրութեամբ Ուխտիս Վարչութեան՝ եղած են սոյն կտակին Մատակարարները

- Հ. Յակոբոս ճէլալեան 1834—1839 (ցմահ)
- Հ. Սամուէլ Սամսարեան 1839—1846